ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 24

13 մարտի 2014 թվականի

2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 04-Ի ԹԻՎ 21 <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԳԵՎՈՐԳԻ ԱՊԻԿՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոց N 25 հասցեի բնակիչ Աբրահամ Գևորգի Ապիկյանի 01.02.2014 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոց 25ա հասցեի հողամասում 1985թ. կառուցվել է պահեստարան և 1981թ մառան, 1999 թվականին՝ բնակելի տանը կից կառույց և փաստացի հողատարածքի չափը կազմում է 0.05799 քմ, որից 97.7 քմ հողատարածքը համարվում է ընդհանուր օգտագործման և հանդիսանում է Գևորգ և Աբրահամ Ապիկյանների բնակարանները սպասարկող ճանապարհ, սակայն իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, ուստի ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով <<Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի դրույթներով ***որոշում եմ***

1. Ճանաչել Մարալիկ քաղաքի բնակիչ Աբրահամ Գևորգի Ապիկյանի /ծնված 28.02.1956թ./ ք. Մարալիկ, Շիրակացի փողոց, N 25ա հասցեում գտնվող 0.05799 քմ հողամասի և նրա վրա 1985թ. կառուցված պահեստարանի և 1981թ մառանի, 1999 թվականի բնակելի տանը կից կառույցի գույքային իրավունքները:
2. Ճանաչել վերոնշյալ՝ 97,7 քմ ընդհանուր օգտագործման հողատարածքը Աբրահամ և Գևորգի Ապիկյանների ընդհանուր համատեղ սեփականությունը:
3. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 25

13 մարտի 2014 թվականի

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑԻ ՓՈՂՈՑԻ 89/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 0.063975 ՀԱ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 91.75 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՎԱԾ <<ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ>> ՄԱՏՈՒՌԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված <<Պետական կամ համայնքային հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ պետության կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման>> կարգի 2-րդ կետի Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոցի 89/1 հասցեում ինքնակամ զբաղեցրած 0.063975 հա հողամասում ինքնակամ կառուցված 91.95 հա մակերեսով կառուցապատված <<Սուրբ Սարգիս>> մատուռը՝ ***որոշում եմ***

4. Մարալիկ քաղաքի Շիրակացի փողոցի 89/1 հասցեում ինքնակամ զբաղեցրած 0.063975 հա հողամասում ինքնակամ կառուցված 91.95 հա մակերեսով կառուցապատված <<Սուրբ Սարգիս>> մատուռը ճանաչել համայնքային սեփականություն:
5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քաղաքապետ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 26

13 մարտի 2014 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով ***որոշում եմ***

1. Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 4, դաս 1 (փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 4212 (էներգետիկ ծառայություններ) հոդվածի 1-ին եռամսյակի 800.0 թիվը փոխարինել 1300.0 թվով, 2-րդ եռամսյակի 2000.0 թիվը փոխարինել 2500.0 թվով, 3-րդ եռամսյակի 3600.0 թիվը փոխարինել 4100.0 թվով, 4251 (շենքերի և ինությունների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի 1-ին եռամսյակի 400.0 թիվը փոխարինել 550.0 թվով:
2. Համապատասխանաբար բյուջեի վարչական մասի եկամտային մասի 7131 հոդվածի (հողի հարկ) 1-ին եռամսյակի 1000.0 թիվը փոխարինել 1650.0 թվով, 2-րդ եռամսյակի 3800.0 թիվը փոխարինել 4300.0 թվով, 3-րդ եռամսյակի 8500.0 թիվը փոխարինել 9000.0 թվով:
3. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.
   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27

13 մարտի 2014 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, ելնելով քաղաքապետարանի աշխատակազմում փաստաթղթաշրջանառության կանոնակարգման անհրաժեշտությունից

որոշում եմ

4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի գործավարության կարգը՝ համաձայն հավելվածի:
5. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված կարգից բխող գործառույթների իրականացումը:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2014թ 13 մարտի

ք. Մարալիկ